ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 22 ապրիլի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի փետրվարի 27-ի N 217-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի փետրվարի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-Հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին» 1997 թվականի օգոստոսի 29-ի համաձայնագրով (այսուհետ՝ Հիմնադիր համաձայնագիր) ստեղծված Ռուս-Հայկական Համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գործունեության պայմաններն ամրագրելու նպատակով:

2. Համաձայնագրով Կողմերն ամրագրում են Հիմնադիր համաձայնագրով ստեղծված Համալսարանի գործունեության պայմանները:

Համալսարանը բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմա-

կերպություն է, որը համատեղ կառավարվում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Համալսարանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական համալսարան և ունի հիմնադրամի կարգավիճակ:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան՝ Համալսարանն օգտվում է Ռուսաստանի Դաշնությունում բարձրագույն կրթության դաշնային պետական կրթական կազմակերպության կարգավիճակից:

Համալսարանի աշխատանքային լեզուներն են հայերենը և ռուսերենը: Համալսարանում գործավարությունն իրականացվում է ռուսերենով, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում՝ հայերենով:

Հայերենն օգտագործվում է Համալսարանի և Հայաստանի Հանրապետության պետական գերատեսչությունների ու կազմակերպությունների միջև նամակագրության համար:

3. Համաձայնագրով Կողմերի լիազորված մարմիններն են (այսուհետ՝ Լիազորված մարմիններ)՝ հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Հայկական Կողմից Լիազորված մարմին), ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության գիտության և բարձրագույն կրթության նախարարությունը (այսուհետ՝ Ռուսական Կողմից Լիազորված մարմին):

Լիազորված մարմինները հաստատում են Համալսարանի կանոնադրությունը, Կառավարման խորհրդի կանոնակարգը, Կառավարման խորհրդի կազմը, նշանակում են Կառավարման խորհրդի երկու համանախագահներին, ինչպես նաև համատեղ հրամանով հաստատում են Ռեկտորին պաշտոնում և համատեղ հրամանով՝ ազատում զբաղեցրած պաշտոնից:

4. Համաձայնագրի 13-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերությունների համաձայն՝ Համալսարանի գործունեության ֆինանսական ապահովումն իրականացվում է Կողմերի կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի միջոցների հաշվին:

Համալսարանի՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածով սահմանված խնդիրների իրականացման համար ֆինանսական ապահովումը հիմնվում է դրա նպատակային ուղղվածության և բազմաթիվ ֆինանսավորման աղբյուրների վրա և իրականացվում է Կողմերի կողմից՝ իրենց ազգային ռազմավարական փաստաթղթերին համապատասխան՝ հաշվի առնելով իրենց ազգային օրենսդրության դրույթները, ինչպես նաև Համալսարանի կողմից՝ եկամուտ ստեղծող գործունեության և ֆինանսավորման այլ արտաբյուջետային աղբյուրների հաշվին:

Համաձայնագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ուսուցումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

5.1. ապահովել, որ Հայկական Կողմից Լիազորված մարմինը դիվանագիտական ուղիներով Ռուսական Կողմից Լիազորված մարմնին տեղեկացնի իր ներկայացուցիչների թեկնածությունների մասին՝ Կառավարման խորհրդի կազմը ձևավորելու կամ փոփոխություններ կատարելու նպատակով (հոդված 6, պարբերություն 5),

5.2. Համալսարանում գիտական և մանկավարժական աշխատողներին ու ուսումնառուներին երաշխավորել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ակադեմիական իրավունքներ ու ազատություններ (հոդված 9),

5.3. հայոց և ռուսաց լեզուների տարածման ու Կողմերի պետությունների ընդհանուր մշակութային, կրթական և գիտական տարածքն ընդլայնելու նպատակով ապահովել, որ Հայկական Կողմից Լիազորված մարմինն աջակցի Համալսարանին Կողմերի պետությունների կրթական և գիտական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման գործում (հոդված 11, պարբերություն 1),

5.4. ապահովել, որ Հայկական Կողմից Լիազորված մարմինը տեղեկացնի Համալսարանին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կրթության ու գիտության բնագավառում պետական ծրագրերին նրա մասնակցության հնարավորության մասին՝ նշված ծրագրերի իրագործմանն ուսումնառուներին, գիտական և մանկավարժական աշխատողներին ներգրավելու նպատակով (հոդված 11, պարբերություն 2),

5.5. Համալսարանի կողմից Համաձայնագրով նախատեսված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հողատարածքները տրամադրել Համալսարանին անհատույց օգտագործման՝ բացառապես Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված՝ Համալսարանի խնդիրների կատարումն ապահովելու համար. ընդ որում՝ Համալսարանի ենթակառուցվածքի ընդլայնումը դիտարկվում է Կողմերի պետությունների կողմից իրականացվող ռազմավարական ծրագրերի շրջանակում (հոդված 12, պարբերություններ 3 և 4),

5.6. Համալսարանի գործունեության ֆինանսական ապահովումն իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի միջոցների հաշվին (հոդված 13, պարբերություն 1),

5.7. ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ Համալսարանի տարածքում անվտանգության ապահովման և իրավակարգի պահպանման համար (հոդված 15),

5.8. Համաձայնագրի գործողությունը դադարելու դեպքում Ռուսաստանի Դաշնության կառավարության հետ միասին ապահովել Համալսարանի ուսանողների ուսման ավարտը, նշանակել լուծարքային հանձնաժողով, որը կկազմի Համալսարանի գույքի լուծարքային հաշվեկշիռը (հոդված 18, պարբերություն 3):

6. Համաձայնագրի 18-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերությունների համաձայն՝ Համաձայնագիրը կնքվում է 10 տարի ժամկետով:

Համաձայնագրի գործողությունն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ 10-ամյա ժամանակահատվածների համար, եթե Կողմերից ոչ մեկը դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցման միջոցով չհայտնի դրա գործողությունը

դադարեցնելու վերաբերյալ իր մտադրության մասին ոչ ուշ, քան առաջին կամ հաջորդող ժամանակահատվածները լրանալուց 6 ամսից առաջ:

Համաձայնագրի համաձայն՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից իրենց գործողությունը դադարեցնում են Հիմնադիր համաձայնագրի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը և 2-13-րդ հոդվածները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 ապրիլի 2025 թվականի
ՍԴՈ-1778